ԿԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բաթումի պայմանագրով Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում էր 12 հազար քառակուսի կիլոմետր: Բնակչության թիվը գաղթականների հետ միասին մոտ մեկ միլիոն մարդ էր:[1] 1918 թվականի հոկտեմբերի 11-ին Հայաստանի Խորհրդի հերթական նիստում գաղթականներին օգնելու նախահաշվի քննարկման ժամանակ հայտարարված պաշտոնական տվյալների համաձայն հանրապետությունում գաղթականների ընդհանուր թվաքանակը կազմում էր 330 հազար մարդ:[2] Ժամանակակիցներն իրավամբ նորանկախ Հայաստանը համեմատում էին գաղթականական կայանի հետ:[3]

Մեր հոդվածի նպատակն է ներկայացնել նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունում փախստականների հիմնախնդիրը իր դրսևորումներով և առանձնահատկություններով հանդերձ:

Ծայրահեղ բարդ ռազմաքաղաքական և ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում հանրապետության իշխանություններին անհրաժեշտ էր ըստ էության ոչնչից ստեղծել կենսունակ պետություն: 1918 թվականի օգոստոսի 3-ին Հայաստանի խորհրդում կառավարության ծրագրային հայտարարության մեջ վարչապետ Հ. Քաջազնունին նորանկախ հանրապետությունում ստեղծված իրավիճակը իրատեսորեն բնութագրում է որպես «կատաստրոֆային»:

«Տնտեսական կյանքի ու ֆինանսական դրության կատարյալ քայքայում, դադարում ապրանքների արդյունաբերության ու փոխանակության, կենսամթերքների ծայրաստիճան պակասություն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայություն կամ սոսկալի թանկություն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցության դադարում, երթևեկության ուրիշ միջոցների պակասություն, ապա հարյուր հազարներով հաշվվող անտուն

[1] Տես Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 164: Ա. Խատիսյանը նշում է «հազիվ 9 000 քառ. կիլոմետր» տարածք, տես Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 86:
[2] Տես «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918 թ:
[3] Տես Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Թեհրան, 1982, հ. 7, էջ 144: Նույնը տես Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 199:

և անսնունդ գաղթականություն, անապահով կացություն սահմանների վրա և որպես անխուսափելի հետևանք այս բոլորի անիշխանություն».- այսպես է ներկայացնում վարչապետ Հ.Քաջազնունին երկրում ստեղծված ներքաղաքական, սոցիալ-տնտեսական վիճակը:[4] Ինչպես տեսնում ենք, վարչապետը իր կառավարության ծրագրային հայտարարության մեջ երկրում տիրող վիճակը ծանրացնող իրողությունների շարքում հստակ մատնանշում է նաև հանրապետությունում «հարյուր հազարներով հաշվվող անտուն և անսնունդ» փախստականների առկայությունը:[5] Եվ դա բնական է:

1915 թվականից ի վեր հայ հասարակական-քաղաքական գործիչների մի մասը այս կամ այն չափով առընչվել են արևմտահայ փախստականների հիմնախնդրի լուծման հետ կապված տարաբնույթ հարցերին: Եթե մեծածավալ և տնտեսապես շատ ավելի հզոր՝ թեկուզև պատերազմի մեջ գտնվող Ռուսաստանում փախստականների հիմնախնդրի լուծման համար հայ գործիչները ստիպված էին հաղթահարել բազմաթիվ դժվարություններ և բարդություններ, ապա նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունում, այն էլ նմանօրինակ ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում, փախստականների հետ կապված սոցիալական, տնտեսական և քաղաքական հարցերի լուծումն իշխանությունների համար անխուսափելիորեն պետք է վերածվեր լուրջ, շատ դեպքերում դժվար լուծելի հիմնախնդրի:

Հայաստանի Հանրապետությունում 330 հազար փախստականները կազմելով մոտ մեկ միլիոնանոց ազգաբնակչության մեկ երրորդը, իրենցից ներկայացնում էին բավականին ստվար զանգված: Ընդ որում, փախստականները սոցիալական առումով միատարր չէին: Հանրապետության իշխանությունները փախստականների շրջանում համապատասխան դիտարկումների հիման վրա նրանց տարանջատում էին երեք հիմնական սոցիալական խմբերի: Առաջինը սեփական միջոցներ ունեցող փախստականներն էին, երկրորդը՝ սեփական աշխատանքով իրենց գոյությունը պահպանելու հնարավորություն ունեցողները, երրորդը՝ առանց կողմնակի օժանդակության իրենց գոյությունը պահպանելու հնարավորություն չունեցողները:

---

[4] «Զանգ», 7 օգոստոսի 1918 թ.; նույնը տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1998, էջ 57:

[5] Տես «Զանգ», 7 օգոստոսի 1918 թ.; նույնը տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 57:

Բնական է, որ հանրապետությունում տիրող ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում երրորդ խումբը կազմող «անտուն և անսնունդ» փախստականները ազգաբնակչության մեջ առավել անպաշտպան և խոցելի մասն էին կազմում: Վերջինների թվաքանակն էլ բավականին մեծ էր: Իշխանությունների կողմից արված հաշվարկով այս կամ այն չափով սոցիալական աջակցության կարիքն ունեցող փախստականները կազմում էին ավելի քան 157 հազար մարդ: Երկրի քիչ թե շատ նորմալ տնտեսական պայմաններում այդքան փախստականների նվազագույն կենսագործունեության, առավել ևս սոցիալական պահանջմունքների նվազագույնը ապահովելը արդեն իսկ ծանր խնդիր կհանդիսանար: Առավել ևս քայքայված տնտեսության և շրջափակման մեջ գտնվող հանրապետության իշխանությունների համար փախստականների գոնե նվազագույն ծավալի սոցիալական և կենցաղային հարցերի լուծումն իրոք դժվարագույն խնդիր էր:

Փախստականների առջև ծառացած սոցիալ-տնտեսական հարցերին այս կամ այն չափով լուծումներ տալիս հանրապետության իշխանությունները միաժամանակ պետք է ձգտեին, որ փախստականները չմեկուսացվեին երկրի սոցիալ-տնտեսական, ներքաղաքական կյանքից, այլ հակառակը՝ ներգրավվեին հանրապետության ներքին կյանքին, ինտեգրվեին նրանում: Հատկապես դա վերաբերում էր արևմտահայ փախստականներին: Երկրի սոցիալ-տնտեսական և ներքաղաքական կյանքից փախստականների մեկուսացման հանգամանքը իշխանությունների համար զգալի վտանգ կարող էր ներկայացնել: Մի կողմից, լինելով միայն պետական սոցիալական օգնության սպառողներ, այսինքն՝ լոկ նպաստառուներ, փախստականները ծանր բեռ կհանդիսանային փոքրածավալ, արդեն իսկ քայքայված հանրապետության տնտեսության համար: Մյուս կողմից փախստականների ինքնամփոփ, մեկուսացած վիճակը հավանական վտանգ կներկայացներ երկրի ներքաղաքական կայունության համար: Այդ ստվար սոցիալական խավը հեշտությամբ կարող էր ընկնել այս կամ այն հակապետական ուժերի ազդեցության տակ, դառնալով նրանց ձեռքի տակ վտանգավոր գործիք:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ գաղթականների, հատկապես արևմտահայ փախստականների մի մասը զինված էր և ընդգրկված զինված խմբավորումների մեջ: Հանրապետությունում փախստականներից կազմված զինված խմբերի առկայությունը կարևոր գործոն էր հանդիսանում երկրի ներքաղաքական կյանքում: Ինչպես ներքաղաքական կյանքը ապակայունացնելու, այնպես էլ հակառակը՝ կայունությունը ապահովելու առումով փախստա-

կանների զինված խմբավորումները ինքնստինքյան իրենցից ներկայացնում էին լուրջ ներքաղաքական հիմնահարց:

Սոցիալ-տնտեսական ծանր պայմանները փախստականների շրջանում բնականաբար դժգոհություններ և հուզումներ էին առաջ բերում: Դրանք առանձին դեպքերում վերածվում էին նաև զանգվածային հրապարակային ելույթների: Այսպես, 1918 թվականի սեպտեմբերի 26-ին Երևանում տեղի ունեցավ փողոցային ցույց, որը կազմակերպել էին Աուրմալուի փախստականները: Տուցարարները պահանջում էին վերադարձնել իրենց հայրենի ծննդավայրը, որը Բաթումի պայմանագրի համաձայն գտնվում էր թուրքական զորքերի օկուպացիայի տակ: «Նրանք սկզբում ներքին գործոց մինիստրության տան, հետո կոմենդանտի տների առաջ հավաքույթներ կազմեցին, և անկարգ աղաղակներով պահանջում էին իրենց վերադարձնել իրենց ծննդավայրը,- ասվում է «Ժողովուրդ» թերթի «Հուզումներ գաղթականների մեջ» անվանումը կրող հաղորդման մեջ,- ժամը 4-ին ամբոխը ցրելու համար երևացին ձիավոր զինվորներ, որոնք և մտրակներով սկսեցին ծեծել հավաքվածներին, մի երկուսը մինչև իսկ հրացանի կոթերով էին ծեծում: Ամբոխը մի փոքր տեղի տվեց, բայց բուլվարից քարերի և հողի տարափով փախցրին այդ ձիավորներին, օդը լի էր հայհոյանքներով ու աղաղակներով: Կամենդանտի տան մոտ երկար սպասելուց և ներքին գործ(ոց) մինիստրին չտեսնելուց հետո ամբոխի մի մասը Աստաֆյան փողոցով դիմեց դեպի մինիստրի բնակարանը: Մութն ընկնելուն պես ամբոխը ցրվեց»:[6]

Սննդամթերքի, առաջին հերթին հացի հայթայթման՝ ըստ էության գոյապահպանման խնդիրը ստիպում էր գաղթականներին որոնել դրանք այն վայրերում, որոնք քիչ էին տուժել պատերազմական գործողություններից և շատ դեպքերում դիմել հակահիրավական քայլերի՝ սեփական ու իրենց մերձավորների կյանքը փրկելու համար: Այդ գործողությունների թիրախ էին դառնում հիմնականում մահմեդական բնակավայրերը, որոնք գտնվում էին հացառատ շրջաններում և չէին տուժել թուրքական զորքերի ասպատակություններից:

Այդպիսի մի փաստի մասին նույնիսկ հնչեցվեց Հայաստանի Խորհրդի ամբիոնից: Երկրի պարենավորման ճգնաժամային վիճակի, չորս կողմից շրջափակված լինելու պայմաններում համատարած սովի մասին Հայաստանի Խորհրդի 1919 թվականի հունվարի 25-ի նիստում պարենավորման նախարարի զեկուցումից հետո բացված քննարկումների ընթացքում, ազգությամբ թուրք

---

[6] «Ժողովուրդ», 26 սեպտեմբերի 1918 թ., հինգշաբթի, N 14; նույնը տես Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 239:

պատգամավոր Աղաբեգովը իր խոսքում նշեց, «որ մենք չունենք մեր երկրում իրավակարգ: Կատարվում են մի շարք հանցագործություններ, որոնք մնում են անպատիժ: Սասունցիները 6 թուրքական գյուղեր սրի են մատնել, կառավարությունը վերոհիշյալներին չի պատժել»:[7] Դրան ի պատասխան պատգամավոր Ս. Վրացյանը իր ելույթում ասում է, որ ցորեն ստանալու «մոտ աղբյուրը տեղական թուրքերից է: Ապացուցված է, որ Սուրմալուի մի գյուղերում կան բավականին ցորեն, մինչդեռ մոտիկ հայ գյուղերը քաղցից մեռնում են»: Եվ այնուհետև ավելացնում է. «Սակայն մեղադրել սասունցիներին, թե նրանք գյուղեր են կոտորել դիտավորյալ, դա ճիշտ չէ, ստեղծված կացությունը նրանց ստիպել է այդպես վարվել»:[8]

Ինչպես վերը բերված հրապարակային ցույցի և իրավակարգի խախտման, այնպես էլ բազմաթիվ այլ դեպքերը հանգեցնում էին հանրապետության ներքին բնականոն կյանքի ապակայունացմանը, դառնում էին ներքաղաքական լուրջ հիմնախնդիր, վերջին հաշվով պարարտ հող ստեղծում անիշխանության համար: Հանրապետության ղեկավար շրջանակները փախստականների հիմնախնդրի նման դրսևորումները նույնպես չէին կարող անտեսել:

Ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր երկրի ներքաղաքական կյանքում փախստականների հիմնախնդիրը՝ որպես հասարակական-քաղաքական երևույթ հանդես է գալիս իր սոցիալական, տնտեսական և քաղաքական դրսևորումներով: Հայ իրականության մեջ նշվածներին ավելանում էին ևս մի քանի այլ առանձնահատուկ դրսևորումներ:

Մի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ փախստականների ճնշող մեծամասնությունը հայազգի Արևմտյան և Արևելյան Հայաստանի բնակիչներ էին: Այդ առումով փախստականների հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում անբաժանելիորեն շաղկապված էր ազգապահպանության հիմնահարցի հետ: Անհրաժեշտ էր փրկել կործանման եզրին հայտնված հայ ժողովրդի բեկորները՝ արևմտահայ և արևելահայ փախստականներին: Բնական է, որ նորաստեղծ ազգային պետության ղեկավարները փախստականների հիմնախնդրի հետ կապված սոցիալական, տնտեսական և քաղաքական հարցերի լուծումները մշակելիս և դրանք իրականացնելիս չէին կարող անտեսել ազգապահպանության հիմնահարցը: Միանշանակ կարելի է պնդել, որ նորանկախ ազգային պետության ղեկավարների համար փախստականների

---

[7] Տես ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 15, թ. 91:
[8] Տես ՀԱԱ, ֆ. Պ-198, ց. 1, գ. 15, թ. 94:

հիմնախնդիրը և ազգապահպանության հիմնահարցը անկապտելիորեն միահյուսված էին իրար հետ՝ դրանք մեկը մյուսից տարանջատված պարզապես անհնար էր դիտարկել:

Մյուս առանձնահատկությունը՝ սոցիալական ծանր պայմաններից արևմտահայ և արևելահայ փախստականների ծեռբազատվելու բնական ձգտումն էր: Նրանք ստեղծված իրավիճակից փրկությունը տեսնում էին հայրենի ծննդավայրերը վերադառնալու մեջ: Եվ այդ անկոտրում ձգտումը նրանց մոտ պահպանվում էր անընդհատ և արտահայտվում էր տարբեր առիթներով ինչպես մինչև հանրապետության հռչակումը, այնպես էլ վերջինիս գոյության ամբողջ ժամանակաշրջանում: Այդ ձգտումը իրականացնելու համար փախստականները դիմում էին տարբեր քայլերի: Այդպիսի մի օրինակ էր վերը բերված Սուրմալուի փախստականների հրապարակային ելույթը: Առավել ցայտուն այդ ձգտումը իր արտահայտությունը գտավ այն ժամանակ, երբ հանրապետության տարածքը թուրքական զորքերի կողմից պարպելու մասին լուրերը տարածվելուց անմիջապես հետո սկսվեց փախստականների տարերային զանգվածային շարժը դեպի հայրենի բնակավայրեր:

Հայրենիք վերադառնալու և ազատ ու անկախ Հայաստանում իրենց հետագա ճակատագիրը ինքնուրույն տնօրինելու ձգտումը արևմտահայ փախստականների մոտ առանձնահատուկ էր ընդգծված: Որպես ազգային-քաղաքական նպատակ և իդեալ, այն իր ձևակերպումը ստացավ Արևմտահայ 1-ին համագումարում և նույնիսկ իրականացվեց 1917 թվականում ստեղծված բարենպաստ պայմաններում: Այդ ցանկությունը պահպանվեց նաև հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում: Ներկայացնելով հանրապետության ստեղծման հենց առաջին օրերից տեղ գտած հատվածականության երևույթը, Ա. Ջամալյանը նշում է, որ «վանեցիք կարծում էին, թե կառավարությունը բոլոր խնդիրներից վեր պիտի դասի «Վանա քաղաքի» և շրջանի վերագրավումը, որպեսզի գաղթական ժողովուրդը ազատվի իր զրկալից կյանքից» և, բնականաբար, վերադառնա և տնօրինի իր հայրենի օջախները: Անդրանիկի գլխավորությամբ զորաջոկատի և բազմահազար փախստականների սկսված շարժման դրդապատճառներից մեկն էլ, անկասկած, իրենց ընտանիքների հետ վերամիավորվելու և անգլիական զորքերի հետ միասին հայրենիք վերադառնալու ձգտումն էր: Հայրենիք վերադառնալու ու Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծման մասին արևմտահայ փախստականների ազգային-քաղաքական նպատակները և իդեալները իրենց ձևակերպումն ստացան 1918 թվականի փետրվարին Արևմտահայ 2-րդ համագումարում:

Հայրենի ծննդավայրերը վերադառնալու այդ ձգտումը, բացի հանրապետության ներքաղաքական կյանքում իր դրսևորումներից, հանգեցնում էր նաև փախստականների հիմնախնդրի միջազգայնացմանը, դառնում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնահարցերից մեկը:

Սոցիալական տարբերակումից բացի, փախստականները հստակորեն տարանջատվում էին նաև ազգագրական առումով: Ինչպես ողջ հայ ժողովուրդը պատմական ճակատագրի բերումով բաժանված էր երկու հատվածների, այնպես էլ գաղթականությունը տարանջատված էր արևելահայ և արևմտահայ փախստականների: Ընդհանուր 330 հազար փախստականներից արևելահայերը կազմում էին 180 հազար, իսկ արևմտահայերը՝ 150 հազար մարդ:[9]

Առաջին անգամ բռնագաղթի ճանապարհները բռնած արևելահայ փախստականների վիճակը հատկապես ծանր էր, այդ թվում նաև հոգեբանորեն: Վերջիններս՝ խուճապահար և անկազմակերպ բռնագաղթից հետո ոչ մի տեղից էական օժանդակություն չստանալով, թողնված էին բախտի քմահաճույքին: Նորանկախ հանրապետությունում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում ոչ հասարակությունը, ոչ էլ ցաք ու ցրիվ գործող բարեգործական կազմակերպությունները պարզապես ի վիճակի չէին իրականացնել այնպիսի սոցիալական օգնություն և աջակցություն, ինչպիսին ցուցաբերվել էր արևմտահայ փախստականների նկատմամբ 1915 թվականից հետո: Միակ հույսը նորաստեղծ հանրապետության իշխանություններն էին, որոնց հնարավորությունները պարզապես չնչին էին:

Հանդիսանալով Մեծ եղեռնը վերապրած, հայ ժողովրդի արևմտահայ հատվածի մի մասը, արևմտահայ փախստականները Հայաստանի Հանրապետությունում իրենցից ներկայացնում էին յուրահատուկ էթնոսոցիալական ընդհանրություն՝ իրենց ուրույն բարքերով և ավանդույթներով: Արևմտահայ փախստականների մի մասը արդեն իսկ երկրորդ անգամ էին բռնել այս կամ այն չափով կանոնավոր և կազմակերպված գաղթի ճանապարհները: Ի տարբերություն արևելահայ փախստականների, արևմտահայ փախստականները ռազմաքաղաքական առումով բավականաչափ կազմակերպված էին: Դեռևս 1917 թվականին արևմտահայ փախստականներն Անդրկովկասում ձևավորել էին արևմտահայ առանձին ազգային-քաղաքական ղեկավար մարմիններ և ունեին իրենց ռազմաքաղաքական առաջնորդները: Գործում էին նրանց

---

[9] Տես «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918 թ., երեքշաբթի, N 12:

շահերն արտահայտող հայրենակցական միություններ, առանձին կուսակցություններ կամ կուսակցությունների առանձնացված կազմակերպություններ: Թիֆլիսում հրապարակվում էին արևմտահայ պարբերականներ՝ արևմտահայ դաշնակցականների «Աշխատանքը», ռամկավարների «Վան-Տոսպը», Անդրանիկի և մի քանի արևմտահայ մտավորականների կողմից նախաձեռնած անկուսակցական «Հայաստանը»:

Միաժամանակ արևմտահայ փախստականներն ունեին իրենց ընդգծված և տարբեր ժամանակներում արտահայտված ազգային-քաղաքական նպատակները և իդեալները՝ վերադառնալ հայրենիք և ազատ ու անկախ Հայաստանում ինքնուրույն տնօրինել իրենց հետագա ճակատագիրը: Ռուսաստանում ցարիզմի տապալումից հետո արևմտահայ փախստականները, դրսևորելով աննկուն կամք, կենսունակություն և տոկունություն, հրավիրեցին Արևմտահայ 1-ին համագումարը և ընտրեցին արևմտահայ ղեկավար մարմիններ, վերաբնակեցրեցին ամայացած Արևմտյան Հայաստանը և լծվեցին հայրենիքի վերաշինության գործին: Արևմտյան Հայաստանում կազմակերպեցին տեղական կառավարման մարմինների գործունեությունը և ժողովրդի ապահովության համար կազմավորեցին կամավորական զինված խմբեր, ինչպես նաև միլիցիայի զորաջոկատներ:

Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո՝ կովկասյան ճակատի քայքայման պայմաններում արևմտահայ փախստականները կազմավորեցին կանոնավոր զորամիավորումներ: 1918 թվականին թուրքական զորքերի՝ Արևմտյան, ապա Արևելյան Հայաստան ներխուժման ժամանակ զենքի ուժով լուծեցին իրենց ապագա գոյապահպանման խնդիրը: Արևմտահայ զորաջոկատները մասնակցեցին 1918 թվականի մայիսյան հերոսամարտերին և դրանով իսկ իրենց ներդրումը ունեցան Հայաստանի Հանրապետության ստեղծման գործում:

Այդ պատմական իրադարձությունների բովով անցած արևմտահայ փախստականները՝ իրենց կամքից անկախ հայտնվեցին մի նոր պետության մեջ՝ անկախ Հայաստանի Հանրապետությունում: Նորաստեղծ Հայաստանի Հանրապետության նկատմամբ արևմտահայ փախստականները դրսևորեցին ավելի քան զուսպ և սառը, եթե չասենք անկողմնակալ և անտարբեր վերաբերմունք: Ինչպես նշում են ժամանակակիցները, այդ վերաբերմունքը շաղախված էր մի տեսակ խորթության, անհարազատության զգացմունքներով: Ռ. Տեր-Մինասյանը հիշատակում է «թրքահայ Ազգային Խորհրդի և Հայրենակցական միությանց այն գաղափարը՝ որ ներկա Հայաստանը իրենց խորթ միայն

«Արարատյան Հանրապետություն» մըն է»:[10] Ս. Վրացյանը նույնպես նշում է, որ արևմտահայ փախստականները առհասարակ, հարազատ չէին զգում իրենց հանրապետության մեջ:[11] Միաժամանակ արևմտահայ փախստականների մի մասն էլ Անդրանիկի գլխավորությամբ միանշանակորեն թշնամական վերաբերմունք դրսևորեցին Հայաստանի Հանրապետության իշխանությունների նկատմամբ, ընդհանրապես չճանաչեցին «Երևանի հայկական հանրապետությունը», գտնելով, որ այն ստեղծվել է շնորհիվ Թուրքիայի:[12]

Մատնանշելով «այն անվստահությունը ու սառնությունը, որ գոյություն ուներ երկու հայկական հատվածների միջև» Հայաստանի Հանրապետությունում, Ռ. Տեր-Մինասյանը գրում է, որ «տաճկահայ և ռուսահայ խորթ կը զգային իրարու», ինչը «անդրադառնում էր թե երկու հատվածների փոխհարաբերությանց, թե պետական կյանքի և թե կուսակցական կառուցվածքի ու կյանքի վրա»: Հատվածականությունը՝ շաղախված փոխադարձ անվստահությամբ և սառնությամբ իր կնիքն էր դրել հայ ժողովրդի արևմտահայ և արևելահայ մասերի միջև գոյություն ունեցող բոլոր, այդ թվում քաղաքական փոխհարաբերությունների վրա:

Այսպիսով Հայաստանի Հանրապետությունում փախստականների հիմնախնդրի՝ որպես հասարակական-քաղաքական երևույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրի ներքաղաքական կյանքում այն հանդես է եկել իր սոցիալական, տնտեսական և ներքին ու արտաքին քաղաքական դրսևորումներով: Հայ իրականության մեջ նշվածներին ավելանում էին ևս մի քանի այլ՝ վերը նշված առանձնահատուկ դրսևորումներ: Նորաստեղծ ազգային հանրապետության ղեկավարները ինչպես իրենց ծրագրային փաստաթղթերում, այնպես էլ ամենօրյա ներքին և արտաքին քաղաքական գործունեության մեջ չէին կարող անտեսել փախստականների հիմնախնդիրը՝ իր բոլոր դրսևորումներով հանդերձ:

---

[10] Տես Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. 7, էջ 151:

[11] Տես Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, էջ 269:

[12] Տե՛ս «Աշխատանք», 22 հունվարի1919 թ.: